

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱԾԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**РЕСПУБЛИКА АРМЕНИИ
ОБЛАСТЬ ЛОРИ
МЭРИЯ Г. ТАШИР
МЭР**

ք. Տաշիր, քաղաքային հրապարակ
հեռ. 2-22-41, 2-25-77

г. Ташир, городская площадь
тел. 2-22-41, 2-25-77

N 1156 -18
10 հուլիս 2018թ.

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶԴԵՏ
Հրանտ Մարգարյանին**

Հարգելի պարոն Մարգարյան,
ուղարկվում են Տաշիր համայնքի ղեկավարի՝ NN 649Ա-656Ա որոշումները:
Առդիր՝ 12 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ 

Էդգար Արշակյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-649-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

19 հունիս 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի նոյեմբերի 10-ի Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասի գնահատման կարգը հաստատելու մասին N 1582-Ն որոշման:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել

1) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման Տաշիր համայնքի հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1-ի

2) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման Տաշիր համայնքի հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջողորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- 1.1 Արտակարգով սահմանվում են արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողովի / այսուհետ հանձնաժողով/ գործառույթները, աշխատանքների կազմակերպման կարգը:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:
3. Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն են՝
 - 1) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների հաշվառումը և գնահատումը,
 - 2) արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկությունների և համձնաժողովի կողմից կազմված ակտերի ներկայացումը մարզային հանձնաժողով

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
6. Հանձնաժողովի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են կիսամյակը մեկ իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:
7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:
8. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի լիազորությունները իրականացնում է հանձնաժողովի նախագահի տեղակալը.

Հանձնաժողովի կողմից գնահատման և հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

10. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

- 1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.
- 2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.
- 3) գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը

11. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

12. Տեղեկատվությունը ներառում է՝

- 1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.
- 2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.
- 3) դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).
- 4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

13. Հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

- 1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.
- 2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.
- 3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.
- 4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

14. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովների կազմում՝ ըստ ուղղությունների ընդգրկվում են արտակարգ իրավիճակների, առողջապահության, գյուղատնտեսության, կապի և տրանսպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

15. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Տաշիր համայնքի ղեկավարի որոշումով:



Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Սուրյան

Կ Ա Ձ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. Նորայր Բաղդասարյան - համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
2. Սլավիկ Անախասյան - համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3. Արմեն Շահբազյան - համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ,
4. Սամվել Շահբազյան - համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ,
5. Խաչեն Մանուկյան - «Քաղաքային տնտեսությունը սպասարկող հիմնարկի տնօրեն, հանձնաժողովի անդամ,
6. Հովսեփ Արշակյան - ԱԻՆ Տաշիրի փրկարարական ջոկատի հրամանատար, հանձնաժողովի անդամ,
7. Արմենակ Սուրյան - «Տաշիր բժշկական կենտրոն» ՓԲԸ վիրաբուժական բաժանմունքի վարիչ, հանձնաժողովի անդամ

Աշխատակազմի քարտուղար՝



Ն. Սուրյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-650-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

21 հունիս 2018թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՅԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Վիգեն Վազգենի Գրիգորյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.05.2018թ. ԼԴՅ/0175/02/18 վճիռը, Վիգեն Վազգենի Գրիգորյանի ձեռք բերված հողամասին տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք քաղաք Տաշիր 5-րդ թաղամաս Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 85/1:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՌԻԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-651-Ա**

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

22 հունիս 2018թ.

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաշիր համայնքի տարածքում գտնվող Գևորգ Կոլանի, Լաուրիկ Ռուբենի, Սուսաննա Գևորգի և Արտակ Գևորգի Պողոսյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ սեփականության վկայական 2510754 տրված՝ 15.05.2008թ/ գույքին ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Գրիբոյեդովի փողոց, թաղամաս 5 հասցեի փոխարեն տալ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 4-րդ թաղամաս, Գրիբոյեդովի փողոց, թիվ 5 հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-652-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

25 հունիս 2018թ.

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՑԵԱՎՈՐՄ ԱՆ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաշիր համայնքի տարածքում գտնվող Յուրա Սաշիկի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ թիվ 1472630 սեփականության վկայական տրված՝ 10.02.2006թ/ գույքին ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Լենին փողոց, թաղամաս թիվ 10, բնակելի տուն 171 Ա հասցեի փոխարեն տալ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 10-րդ թաղամաս, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 171/1 հասցեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒԻԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-653-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

26 հունիս 2018թ.

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄ ԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Տաշիր համայնքի տարածքում գտնվող Մացակ Պավլեի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ թիվ 1436488 սեփականության վկայական, տրված՝ 24.05.2006թ/ գույքին ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Ն. Ստեփանյան փողոց, տուն 16 ա հասցեի փոխարեն տալ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 11-րդ թաղամաս, Ն. Ստեփանյան փողոց, թիվ 16/1 հասցեն:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-654-Ա**

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

27 հունիս 2018թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման» օրինակելի ձևի 1-ին և 2-րդ կետերով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 6-ի թիվ 02/41.3/9003-18 հանձնարարականի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Հովիկ Ստեփանյանին նշանակել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում ազդարարման համար պատասխանատու անձ:
2. ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համակարգչային օպերատոր Սյուզաննա Սուլյանին՝
Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-ին կետով նշանակված պատասխանատու անձի տվյալները տեղադրել համայնքապետարանի կայքէջում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2018թ. հունիսի 27
ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-655-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

03 հուլիս 2018թ.

**ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ և ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով

<Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 42 և 43 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման 1-ին և 2.1 կետերով, <<Իրավական ակտերի մասին>> և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 01.06.2006թ. N 1055-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, <<Արտյոմ Սաքանայան>> Ա/Ձ-ի կողմից կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-008-0280-0038 կադաստրային ծածկագրով 0.06869 հա մակերեսով ինքնակալայրերի այլ հողատեսքի հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման:
2. Անշարժ գույքին տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 14-րդ թաղամաս, Թեիլերյան փողոց, թիվ 15/1 հողամաս:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՃԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**



(Handwritten signature)

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-656-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

03 հուլիս 2018թ.

ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ. N2387 Ն որոշումով, հիմք ընդունելով քաղաքացի Սլավիկ Ստեփանյանի դիմումը /անձ. AK0657828/, «Արտյոմ Սականյան» ԱԶ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, 1986թ. կազմված տեղնիկական անձնագիրը, 27.06.1989թ. Կալինինոյի քաղաքային խորհրդի արձանագրությունից քաղվածքը, նկատի ունենալով, որ տան կառուցապատման և սպասարկման համար օրենքով նախատեսված 995,0քմ. և կից 445,6 քմ. հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Տնատիրության զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1440,0 քմ.:

Հաշվի առնելով այն, որ բնակելի տան 1-ին և 2-րդ հարկերը, բաց պատշգամբը, աստիճանավանդակը, ավտոտնակը և 3,38քմ պարիսպները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը (1969-1985թ). , իսկ անասնաշենքը, թռչնանոցը և 3,92քմ. պարիսպները կառուցվել են 2010թ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրենքի ուժով ճանաչել Սլավիկ Ալեքսեյի Ստեփանյանի և Էլեոնորա Եղիշի Ստեփանյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի, 1-ի թաղամաս, թիվ 7 /կադաստրային ծածկագիր՝ 06-008-0003-0005/ հասցեում գտնվող 1440,6քմ. հողամասի նկատմամբ, որից ըստ փաստաթղթերի 995,0քմ. մինչև 20 տոկոսը գերազանցող հողամասը կազմում է 199,0քմ:

2. Ըստ քարտեզագրման արդյունքների հողամասի 20 տոկոսը գերազանցող 246,6քմ. հողամասը ուղղակի վաճառքով տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով ընդամենը 16420 դրամով օտարել Սլավիկ Ալեքսեյի և Էլեոնորա Եղիշի Ստեփանյաններին (ընդհանուր հողամասը՝ 1440,6քմ.):
3. Սլավիկ Ալեքսեյի և Էլեոնորա Եղիշի Ստեփանյանների հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
4. Հողամասի չափերը որոշվում են «Արտյոմ Սականյան» ԱԶ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Ճանաչել Սլավիկ Ալեքսեյի Ստեփանյանի և Էլեոնորա Եղիշի Ստեփանյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի, 1-ի թաղամաս, թիվ 7 /կադաստրային ծածկագիր՝ 06-008-0003-0005/ հասցեով 1440,6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բոլոր շենք շինությունների նկատմամբ, բացի՝ թիվ 3.-անասնաշենքի/14,86քմ./, թիվ 4.- թռչնանոցի /8,29քմ./ և թիվ 5, 8.- պարիսպների/3,92քմ./:
6. Տնատիրությանը տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք քաղաք Տաշիր 1-ին թաղամաս Երևանյան փողոց, թիվ 7 բնակելի տուն:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթա են գրանցմանը ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:
8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝  Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

